ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

(ոլորտի կամ պետական մարմնի անվանումը)

2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (ՄԺԾԾ) ՀԱՅՏ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

1. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Մշակույթի ոլորտում իրականացվող քաղաքականություն

ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացման ապահովումը ՀՀ կառավարության որդեգրած մշակութային քաղաքականության մեջ կարևոր հիմնական ուղղություն է:

ՀՀ Լոռու մարզի մշակույթի ոլորտում վերջին տարիներին իրականացվող ծրագրերը ընդհանուր առմամբ նպատակ ունեն բարձրացնելու մշակույթի դերը, պահպանելու ազգային մշակութային ժառանգությունը, արդյունավետ օգտագործելու ներուժը, ապահովելու մշակութային ավանդական ձևերի զարգացումը:

ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից իրականացվում են մարզային, պետական, ազգային և այլ նշանակության մշակութային միջոցառումներ:

ՀՀ Լոռու մարզում պետական մշակութային քաղաքականությունը իրականացվում է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից՝ տարբեր ենթակայությունների հետևյալ կազմակերպությունների միջոցով.

h/h	Կազմակերպության անվանումը	Քանակը	Համայնքը	Ծանոթություն
1.	Արվեստի դպրոց	10	Վանաձոր՝ 2, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի, Թումանյան, Շնող, Օձուն,Մեծավան, Գյուլագարակ՝ /նոր/:	
2.	Երաժշտական դպրոց	8	Վանաձոր՝ 3, Սպիտակ, Ալավերդի, Մեծավան, Շիրակամուտ, Ախթալա, Աքորի	
3.	Գեղարվեստի դպրոց	3	Վանաձոր, Ալավերդի, Սպիտակ	
4.	Պարարվեստի դպրոց	1	Վանաձոր	
5.	Գեղագիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղ	1	Վանաձոր	
6.	Մանկական ստեղծագործական կենտրոն	4	Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Մարգահովիտ	
7.	Արվեստի Պետական քոլեջ	1	Վանաձոր	
8.	Մշակույթի պալատ	4	Վանաձոր՝ 1, Ալավերդի՝ 2, Ստեփանավան,	
9.	Մշակույթի ակումբ	43	քաղաքային և գյուղական համայնքներ	3-չգործող
10.	Մշակույթի և ժամանցի կենտրոն	2	Վանաձոր՝ /մասնավոր, Ստեփանավան՝ /պետական/:	
11.	Ռուսական մշակույթի տուն	1	Վանաձոր	
12.	Թանգարան	12	Վանաձոր՝ 3, Ալավերդի՝ 2, Ստեփանավան, Դսեղ, Կուրթան, Ծաթեր Թումանյան, Մարգահովիտ, Շնող,	Ծաթեր և Շնող համայնքն

				երում նորաբաց
13.	Լոռու մարզային գրադարան, առանձին մանկական բաժնով	1/1	Վանաձոր	Մանկա-կան բա-ժինը խիստ վե-րանորոգ-ման ենթակա
14.	Գրադարան	56	քաղաքային՝ 18, գյուղական՝ 38	6-ը չգործող
15.	Թատրոն	5	պետական - 1, համայնքային – 4	
16.	Կամերային նվագախումբ	1	Վանաձոր	
17.	Կամերային երգչախումբ	1	Վանաձոր	
18.	Կինոյի և թատրոնի ինստիտուտ	1	Վանաձոր	
19.	«Ժողովրդական նվագարաննե-րի, երգի-պարի» անսամբլ	3	Վանաձոր՝1, Ստեփանավան՝ 1, Ալավերդի՝ 1	
20.	Փողային նվագախումբ	2	Վանաձոր՝1, Ստեփանավան՝1	
21.	Հուշարձաններ	3045 միա-վոր	մարզի քաղաքային և գյուղական համայնքներ	1045-ը պահ-պանական միավորով
22.	Ինքնագործ Մանկապատանեկան պարային համույթներ	25-ից ավել	Վանաձոր՝ 12, Սպիտակ՝ 3, Ալավերդի՝ 2, Ստեփանավան, Մեծավան, Դսեղ, Շահումյան, ...	
23.	Համայնքային կրթամարզամշակութային կենտրոններ	9	Շահումյան, Շիրակամուտ, Դարպաս, և այլ համայնքներ	
24.	Պատմամշակութային Գերեզմանոցներ	314	մարզի քաղաքային և գյուղական համայնքներ	

1.2 Պատմության և մշակույթի հուշարձաններ

Լոռու մարզպետարանի և ՀՀ մշակույթի նախարարության Լոռու մարզային կառույցների միջև սերտ համագործակցություն է իրականացվում «Հողերի ժամանակավոր սխեմաների հաստատման» հանձնաժողովի շրջանակներում: Մասնավորապես ծառատնկումների, աղբավայրերի, պոչամբարների կառուցման և այլ նպատակներով մեծամաշտաբ հողահատկացումների և հողերի նպատակային փոփոխությունների ժամանակ Լոռու մարզպետը, որպես հանձնաժողովի նախագահ, հաշվի առնելով ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչների առաջարկությունը, հետևողականություն է ցուցաբերել, որպեսզի նման դեպքերում չտուժեն հուշարձաններն ու նրանց պահպանական գոտիները:
2017թ. ընթացքում Լոռու մարզի տարածքում հաջողությամբ շարունակվել են տարբեր ֆինանսական աղբյուրների հաշվին հուշարձանների վերականգնման աշխատանքներ / Օձունի Սբ. Աստվածածին, Քոբայր վանական համալիր, սանահին վանական համալիր և այլ/:

Տեղի է ունեցել հողերի նպատակային նշանակության փոփոխության շուրջ 700 դեպք / Լոռու մարզպետը հանդիսանում է համապատասխան հանձնաժողովի նախագահ, որոնց ընթացքում չի տուժել ոչ մի հուշարձան կամ պատմական միջավայր/:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս Լոռու մարզպետարանը, ներգրավելով համայնքների աշխատակազմներին, ուսումնական հաստատությունների սաներին, Լոռու մարզում տեղակայված զորամասերի զինծառայողներին, համագործակցելով պատմական միջավայրի պահպանության լոռու մարզային ծառայության հետ, կազմակերպել է հուշարձանների տարածքների մաքրման և հնարավորինս բարեկարգման աշխատանքները:

Հարկ ենք համարում նշել, որ 2017թ.-ի ընթացքում Լոռու մարզում ՀՀ Լոռու մարզպետի մասնավոր ներդրման և նախաձեռնությամբ, վերանորոգվեց 10-13-րդ դարերի Հոռոմայրի Սուրբ նշան վանական համալիրի վերին աղոթատունը:

1.3 Թանգարաններ

Մարզում գործում են 12 թանգարաններ, այդ թվում՝
Վանաձորում՝ 3, Ալավերդի՝ 2, Ստեփանավան, Դսեղ, Գյուլագարակ, Թումանյան, Մարգահովիտ, Ծաթեր, Շնող՝ մեկական /:

ՀՀ կառավարության 2014թ սեպտեմբերի 11-ի N 1058-Ն որոշման համաձայն մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծման աշխատանքները «Լոռի Փամբակի» երկրագիտական թանգարանում սկսվել են 2016թ փետրվարի 1-ից: Առ այսօր մուտքագրվել է 8082 նմուշ: Պակասը պայմանավորված է կայքի հետ կապված տեխնիկական և ինտերնետ կապի խնդիրներով: Թանգարաններ այցելուների թիվը տարեկան կտրվածքով շուրջ 21.321: Թանգարաների աշխատողների թիվը՝ 69:

«Թանգարանային գիշեր» խորագիրը կրող միջոցառումներ են կազմակերպվել մարզում գործող բոլոր թանգարաններում, որոնք անցել են պատշաճ մակարդակով:

Թանգարան	**2016թ.**	**2017թ.**
Թանգարանների այցելուների թիվը	24208	21.321 /թիվը պակասել է Վանաձոր-Ալավերդի ճանապարհի փակ լինելու պատճառով/:

h/h	**Վայրը, անվանումը**	**Համառոտ բնութագիր**
1.	**Վանաձոր, «Լոռի-Փամբակի» երկրագիտական թանգարան**	Հիմնադրվել է 1938թ.-ին, հնագետ Եղիա Մոմջյանի կողմից: Թանգարանում առկա է շուրջ 34.000 հազար նմուշներ: Նմուշները թվագրվում են Ք.ա. 4-րդ հազարամյակից մինչ մեր օրեր: Թանգարանում գործում է Հնագիտական, Ազգագրական, և նոր նորագույն պատմության բաժինները:
2.	**Վանաձոր, Կերպարվեստի թանգարան**	Կերպարվեստի թանգարանը ստեղծվել է 1974թ-ին,որպես ազգային պատկերասրահի մասնաճյուղ: 1979թ.-ից ինքնուրույն կարգավիճակ ստանալով անցել է քաղաքային ենթակայության: 2015թ.Թանգարանում առկա է շուրջ 1700 ցուցանմուշներ:
3.	**Վանաձոր,Ստ.Զորյան ի տուն-թանգարան**	1962-64թթ. կառուցված առանձնատունը 1983թ.-ին ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության կողմից հաստատվեց որպես տուն-թանգարան: Թանգարանը ունի 7 սրահ, որից՝ երկուսը որպես աշխատասենյակ, մեկը որպես ննջարան: Թանգարանը ունի շուրջ 2000 հազ.միավոր ֆոնդային ցուցանմուշներ:

4.	**Ալավերդի, Միկոյան եղբայրների տուն-թանգարան**	Թանգարանը հիմնադրվել է 1982թ.-ին:Թանգարանում արտացոլվում են Միկոյան եղբայրների աշխատանքային գործունեությունը: Առկա է հայրական տան ցուցանմուշներ, լուսանկարներ:
5.	**Ալավերդի, ՀՀ Ազգային պատկերասրահի մասնաճյուղ**	Ստեղծվել է 1987թ.
6.	**Դսեղ, Հ.Թումանյանի տուն-թանգարան**	Տուն-թանգարանը ստեղծվել է 1939թ.-ին: 1994թ.-ին Թումանյանի սիրտը թաղվեց թանգարանի բակում: Պահպանվում են հայրական տան իրերը, անձնական իրերը, կյանքին և գործունեությանը վերաբերվող փաստաթղթեր:
7.	**Թումանյան**	Երկրագիտական թանգարան
8.	**Ստեփանավան. Ս.Շահումյանի տուն- թանգարան**	1934թ.-ի մայիսի 24-ին Ստեփանավանի շրջխորհրդի գործկոմի որոշմամբ Ս.Շահումյանի աներոջ տունը վերածվել է, որպես Ս.Շահոմյանի տուն-թանգարան: 1991թ.-ին ՀՀ կառավարության որոշմամբ,թանգարանը վերանորոգվեց որպես Մշակույթի և ժամանցի կենտրոն՝ իր մեջ ներառելով նաև թանգարանային բաժինը: Թանգարանը ունի ցուցադրության ներկայացված 586 ցուցանմուշ, ֆոնդերում առկա են 1515 ցուցանմուշներ:
9.	**Գյուլագարակ, Լոռվա կենցաղի և մշակույթի թանգարան**	ՀԱՊԹ-ի Գյուլագարակիի մասնաճյուղը բացվել է 1989թ.-ին: 1997թ.-ից անցել է համայնքային ենթակայության տակ: Առկա է 105 հնագիտական, 359 ազգագրական ցուցանմուշներ:Շենքային պայմանները կիսավթարային:
10.	**Մարգահովիտի երկրագիտական թանգարան**	Հիմնադրվել է 2007թ.-ին: Ցուցանմուշները դասակարգված են հնագիտական, ազգագրության եվ նոր պատմության բաժիններով: Թանգարանում առկա է շուրջ 1000 անուն ցուցանմուշներ: Թանգարանը համագործակցում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Լոռու մարզի հուշարձանների պահպանության կոմիտեի հետ:
11.	**Շնող**	Հիմնադրվել է 2017թ. Լոռվա կենցաղի թանգարան
12.	**Ծաթեր**	Հիմնադրվել է 2017թ. Լոռվա պատմության թանգարան, գործում է մշակույթի տանը:

1.4 Գրադարաններ

Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ՀՀ Լոռու մարզի քաղաքային և գյուղական գրադարաններին հատկացված գրքերի բաշխմանը և Լոռու մարզային գրադարանային ֆոնդի համալրմանը: Մարզում գործող թվով 52 գրադարանների այցելուների թիվը տարվա կտրվածքով կազմում է՝ 26.074:

«Ազգային գրադարանային շաբաթ» ծրագրի շրջանակներում մարզի գործող գրադարաններում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, գրքային ցուցադրույթներ, թատերականացված դրվագներ:

«Գիրք նվիրելու» օրվա կապակցությամբ միջոցառումներ են կազմակերպվել՝ Լոռու մարզային գրադարանում, Վանաձորի թվով 8 գրադարաններում և այլ կրթական հաստատություններում: Միջոցառման շրջանակներում բազմաթիվ գրականություն է նվիրաբերվել համապատասխան հաստատություններին:

Մարզում գործող և չգործող գրադարանների թիվը՝ 58

Գործող գրադարանների թիվը՝ 52

Չգործող գրադարանների թիվը՝ 6

Քաղաքային գրադարանների թիվը՝ 18

Գյուղական համայնքների գրադարանների թիվը՝ 38

Այն համայնքներում, որտեղ գրադարաններ չէն գործում գրքային ֆոնդերը հանձնվել են տեղի հանրակրթական դպրոցներին, իսկ չգործող գրադարանների գրքային ֆոնդերը պահպանվում են համայնքների ղեկավարների կողմից:

հազար մարդ

Գրադարան	**2016թ.**	**2017թ.**
Գրադարանների այցելուների թիվը	25.759	26.074

Մշակույթի պալատ, ակումբներ, թատրոն

ՀՀ Լոռու մարզի մշակույթի պալատ-ակումբներում և թատրոններում հիմնականում կազմակերպվում են համերգային ելույթներ, թատերականացված ներկայացումներ, շնորհանդեսներ և այլ զանազան միջոցառումներ որոնք նպաստում են ազգաբնակչության ակտիվ հանգստի, գեղագիտական ճաշակի բարձրացմանը՝ ժամանակակից քաղաքացու ձևավորմանը: Այցելուների թիվը՝ 2890:

Մարզում գործող և չգործող մշակույթի պալատ-ակումբների թիվը՝ 47

Մշակույթի ակումբներ	**Գործող**	**Չգործող**
Քաղաքային, Գյուղական	40	3
Մշակույթի պալատ 4	Վանաձոր՝ 1, Ալավերդի՝ 2, Ստեփանավան՝ 1: /ներառյալ՝ քաղաքային/	
Թատրոն՝ 5	**Վանաձոր 4, Ալավերդի 1,/որից մեկը պետական/**	

1.5 Երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի կրթամարզամշակութային ՊՈԱԿ-ներ

Ելնելով ՀՀ կառավարության վարած քաղաքականությունից, ՀՀ Լոռու մարզում մշակութային կրթության ոլորտում կատարվում են աշխատանքներ՝ համակարգի արդիականացման և զարգացման նախադրյալների ստեղծման ուղղությամբ: Մարզի 113 համայնքներից 15-ում գործում են թվով 28 /երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի և այլ / դպրոցներ, որտեղ հաճախում են մոտ 2510 երեխաներ, նախկին 2472 փոխարեն: Երաժշտական և արվեստի դպրոցների որոշ բաժիններ գտնվում են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում, մասնավորապես՝ նրանցում ազգային /2007թ., 2008թ./, լարային և փողային /2009թ.-ից/ նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման պետական ծրագիրը հնարավորություն է տալիս մոռացության վտանգից փրկել մի շարք ազգային նվագարանների լինել-չլինելու հարցը:

Աղյուսակ 1.5.1

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագրի նախորդ տարիներով արահայտված թվային ներկայացում

Ցուցանիշները	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Տարեկան ֆինանսավորման չափը /հազ. դրամ/	18316.9	28.357.9	38.943.5	38.943.5	38.943.5
Ֆինանսավորում ստացած դպրոցների թիվը	13	13	13	13	13
Մեկ սովորողին փոխհատուցված վարձավճարի ամսեկան չափը /գումարը. հազ. դրամ/	10.459	16.186	22.228	22.228	22.228
Ծրագրում ընդգրկված սովորողների քանակը	146	138	146	146	146
Ծրագրի ուղղվածությունը ըստ մասնագիտական բաժինների	ազգային, լարային, փողային	ազգային, լարային, փողային	ազգային, լարային, փողային	ազգ.նվագ արան փող. և լարային	ազգ.նվագ արան փող. և լարային

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի, Ալավերդու, Սպիտակի և Օձունի երաժշտական ու արվեստի դպրոցներում և այլ համայքներում մեթոդական աջակցության շրջանակներում իրականացվում են «վարպետության դասեր», որին մասնակցում են բոլոր դպրոցների աշակերտները և մանկավարժները:

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակիցների մասնակցությամբ շրջայցեր են կազմակերպվել մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, «Ազգային, փողային և լարային նվագարանների ուսուցում» ծրագրով նախատեսված բյուջետային հատկացումների մշտադիտարկում իրականացնելու վերաբերյալ:

Առաջարկություն

2016-2017 ուսումնական տարիներում Վանաձորի Կոմիտասի անվան արվեստի դպրոցում արձանագրվել է աշակերտների թվաքանակի աճ, որի կապակցությամբ խնդրվում է հնարավորության սահմաններում «Վանաձորի Կոմիտասի անվան արվեստի դպրոց ԿՈՒՀ» ՀՈԱԿ-ին հատկացնել պետպատվերով լրացուցիչ ևս 4 տեղեր և երաժշտական գործիքներ՝ /քանոն, շվի, դուդուկ, քամանչա, բամբիռ, սանթուր.../:

Համերգային կազմակերպություններ

ՀՀ Լոռու մարզում գործում են Վանաձորի քաղաքապետարանի «Հորովել» երգի-պարի անսամբլը, կամերային երգչախումբը, կամերային նվագախումբը, երգի թատրոնը, Ալավերդու «Լազուր» ժող. գործիքների համույթը, Ստեփանավանի Ա. Մարգարյանի անվան մշակույթի պալատի ժող. գործիքների համույթը, Վանաձորի, Սպիտակի, Տաշիրի, Շահումյանի, Մեծավանի, Սարչապետի, Օձունի, Գոգարանի և այլ գյուղական համայնքների մանկապատանեկան պարային համույթները, որոնք մեծ ներդրում ունեն մարզի մշակութային կյանքի զարգացման գործում և իրականացնում են ոչ նյութական մշակութային արժեքների պահպանմանը, տարածմանն ու զարգացմանն ուղղված գործունեություն:

1.7 Մշակութային միջոցառումներ

Մշակութային միջոցառումների համար նախատեսված հատկացումները նպատակաուղղված են ազգային և պետական տոների հետ կապված զանգվածային միջոցառումների,

հոբելյանների, ցուցահանդեսների, փառատոների և այլ մշակութային միջոցառումների իրականացման համար: Վերջին տարիներին մշակույթի ոլորտում իրականացված ծրագրերը հնարավորություն են տվել ավելի ռացիոնալ օգտագործել ստեղծագործական ներուժը՝ ի շահ հասարակության մշակութային պահանջմունքների բավարարման:

Մարզում մշակութային կյանքը հիմնականում ապահովում և զարգացնում են մասսայական և մշակութային միջոցառումները, որոնց կազմակերպման ուղղությամբ պետական աջակցությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր: Դրանց նպատակն է հայ մշակութային ժառանգության հանրահռչակումը, երիտասարդ ստեղծագործողների և կատարողների հայտնաբերումն ու խրախուսումը, մարզում առկա ստեղծագործական ներուժի բացահայտումը, մշակույթի, ժողովրդական արվեստի ստեղծագործությունների հանրահռչակումը, միջհամայնքային մշակութային միջոցառումների, մրցույթների կազմակերպումը, համայնքներում մշակութային կյանքի աշխուժացումը: Այդ թվում՝

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հետևյալ միջոցառում-հանդիսությունները.

ա/ «Պատանի երաժիշտ կատարողների» Լոռու մարզային մրցույթ-փառատոն

բ/ «Ազգային նվագարանների երգի-պարի, ասմունքի» ամենամյա Լոռու մարզային փառատոն:

գ/ «Լոռվա հարսանիք» հանդիսություններ համայնքներում՝ /Վանաձոր, Ստեփանավան, Շահումյան/ :

դ/ «Վարդավառ» հանդիսություն Գյուլագարակ համայնքի «Հեքիաթ» հանգստյան գոտու տարածքում,

ե/ Լոռի-Արցախ համագործակցության շրջանակներում, Մարտակերտի վարչական շրջանից շուրջ 30 աշակերտներ հանգստի կազմակերպումը «Ծիծեռնակ» ճամբարում:

- Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրվա առիթով, որը վերիջին տարիներին արժևորվում է նաև որպես Գիրք նվիրելու օր, կազմակերպված միջոցառումը կրում էր **«Իմ Թումանյանը»** խորագիրը և նվիրված էր մեծն լոռեցու ծննդյան 148-ամյակին ու Մայրենի լեզվի օրվան:

«Մշակութային կանգառ» միջոցառումների շրջանակներում՝

- Հայաստանի «Երգի թատրոնի», «Կոմիտասի» անվան լարային քառյակի, Հնագույն երաժշտության «ՏԱՂԱՐԱՆ» համույթի, Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի Ազգային Ակադեմիական Երգչախմբի համերգները Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան և այլ համայնքներում:
- «Հայաստան, ի՝մ սեր» խորագրով համերգների կազմակերպումը Սպիտակ, Ալավերդի, Օձուն, Վանաձոր, Տաշիր, Ստեփանավան համայնքներում:
- ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ «Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոնի անցկացումը:
- «Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 10-11-րդ մրցույթ-փառատոն»-ի Լոռու մարզային փուլերի կազմակերպումը:
- ԱՀ «ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» երգի-պարի պետական համույթի համերգները Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան և այլ համայնքներում:

- Բերքի տոն-2017» տոնահանդեսն այս տարի առաջին անգամ հանդիսավորությամբ նշվեց Վանաձորի Հայքի հրապարակում:
- Ավանդական «Խորովածի տոն - 2017» հանդիսությունը Ախթալա համայնքում

1.6 Ոչ նյութական մշակութային ժառանգության

Աջակցվում են ՀՀ Լոռու մարզի մշակույթի տներում գործող բազմաթիվ պարային, թատերական, ասմունքի, դիզայնի և այլ խմբակների գործունեությանը, ինչպես նաև արհեստագործական և ժողովրդական ինքնագործ խմբակների գործունեությանը, միաժամանակ, խրախուսվում են սաների նվաճումները պարբերաբար կազմակերպվող միջոցառումների ընթացքում, այդ թվում՝

Շահումյանի «Մայրասար» և «Անի» համույթի համերգները մարզի գյուղական համայնքներում, Վանաձորի «Հորովել», «Անի», «Փայլող աստղեր», «Տաթեւ», Օրրան - ի «Մարգարիտներ», Սպիտակի «Զարթոնք», «Արևաշող», Ալավերդու «Հրաշամանուկներ», Օձունի մանկ.պարային ստուդիա, Ստեփանավանի «Անի», Տաշիրի «Տաշիր», Մեծավանի «Ալաշկերտ», Սարչապետի «Զարթոնք», Վանաձորի «Գայաննա» մարզա-մշակութային կենտրոնի մանկական պարային համույթների մասնակցությունը մարզային մրցույթ-փառատոներին, տոնական հանդիսություններին, որտեղ մասնակիցներին տրվում են մրցանակներ, պատվոգրեր, դիպլոմներ և այլ խրախուսական պարգևներ:

Մարզային մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների, զանգվածային միջոցառումների կազմակերպման, ավանդական ազգային ծեսերի վերականգնման ու տարածման նպատակով՝

Ամանորյա և Սուրբ Ծննդյան օրվան նվիրված հանդիսությունների կազմակերպում և անցկացում:

Հայոց բանակի կազմավորման 26-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ.

Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին նվիրված մարզային միջոցառումներ՝ գրական-երաժշտական ցերեկույթներ:

Առաջին Հանրապետության տոնի և Ղարաքիլիսայի հերոսամարտին նվիրված համերգ-հանդիսություն, Վանաձորի «Կոտրած եկեղեցու» շրջակա տարածքում:

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 72-րդ և Շուշիի ազատագրման **26**-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների կազմակերպում:

ՀՀ Անկախության 26-ամյա հոբելյանին և Սահմանադրության օրվան նվիրված հանդիսություններ և տոնական համերգների կազմակերպում:

1988թ.Երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ:

«Ջան Գյուլում», «Ծաղկի տոն», «Տեառն ընդ առաջ», «Սուրբ Խաչվերաց», «Վարդավառ», «Ծաղկազարդ» տոներին նվիրված հանդիսությունների կազմակերպում և անցկացում:

Զանգվածային միջոցառումների թվում՝

Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատում և Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի համերգասրահում **«Իմ Հայաստան»** համահայկական փառատոնի շրջանակներում կազմակերպվել են Արտ երկրներից ժամանած պարային համույթների և երգչախմբերի համերգները, ովքեր պարգևատրվել են Լոռու մարզպետի շնորհակալագրերով:
ՀՀ Շիրակի մարզպետարանի նախաձեռնությամբ Գյումրիում կազմակերպվել է **«Մինասի գույներով»** խորագիրը կրող երիտասարդ նկարիչների հանրապետական միջազգային 6-րդ պլեները, որին մասնակցեցին նաև ՀՀ Լոռու մարզից երիտասարդ նկարիչներ:

ԱՀ «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի համույթի համերգները Լոռու մարզի Վանաձոր, Տաշիր, Ստեփանավան, Ալավերդի և այլ համայնքներում:

«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների **12-րդ** միջազգային փառատոնի կազմակերպումը մարզի քաղաքային և գյուղական համայնքներում որտեղ իրենց մասնակցությունն են ունեցել հանրապետության և մի շարք արտասահմանյան երկրների տիկնիկային թատրոններ:

«Թումանյանական օր» հանդիսությունը Դսեղ համայնքում, նվիրված **Հ.Թումանյանի** ծննդյան 148-ամյակին: Համերգային մասում մասնակցում էին ազգային օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի երգիչ-երգչուհիներ, ժողովրդական երգիչներ, ասմունքողներ, համայնքի դպրոցի շնորհալի ասմունքող երեխաներ:

Լոռու արվեստագետների ստեղծագործությունների «**ԲԱԶՄԱՇԱՎԻՂ** վանաձորյան ներկապնակ» խորագրով ցուցահանդեսը:

Կանանց տոնին նվիրված «**ՀԱՎԵՐԺԻ ԳՐԱՎԱԿԱՆԸ**» խորագիրը կրող ցուցահանդես:
Վիտուտաս Բիկաուսկաս «**Պատմությունը**» անհատական ցուցահանդես :

Երջանկահիշատակ գեղանկարիչ **Վլադիմիր Վարդանյանի** ստեղծագործությունների անհատական ցուցահանդես:

ՀՀ ժող. արտիստ, կինոռեժիսոր, վավերագիր **Արտավազդ Փելեշյանի** ծննդյան 79 – ամյակին նվիրված հանդիսություն**:**

Անուշ Ղարաքեշիշյանի մետակսանկարչության անդրանիկ ցուցահանդեսի բացում:

Ռայա Ղարաբեկյանի ստեղծագործությունների ցուցահանդեսի բացումը՝ նվիրված վաստակաշատ շինարար, հայրենական պատերազմի վետերան Արամ Ղարաբեկյանի ծննդյան 100-ամյակին:

ՀՀ վաստակավոր նկարիչ, Վանաձորի պատվավոր քաղաքացի **Անատոլի Ավետյանի** ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը՝ նվիրված հեղինակի ծննդյան 65-ամյակին:

Բաթումահայ երաժիշտ, երգահան, ջութակահար-ջութակագործ **Հրաչյա Սեչենյանի** ստեղծագործությունների ցուցահանդեսը

«Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 10-րդ և 11-րդ մրցույթ-փառատոն»-ի Լոռու մարզային փուլի կազմակերպում: Հաղթողները մասնակցել են Երևանում կայանալիք հանրապետական փուլին՝ արժանանալով մրցանակների և հուշանվերների:

«Երեխաների պաշտպանության օրվան» նվիրված միջոցառումներ Վանաձորի Հայքի հրապարակում և այլ համայնքներում:

«**Անհայտ Կորած Ազատամարտիկների»** օրվան նվիրված միջոցառում:

«Երաժշտության տոն» հանդիսության կազմակերպում:

«Ֆրանկոֆոնիայի» օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում:

Ավանդույթ են դարձել Լոռու մարզի հետ բարեկամության խոր արմատներ ձգած **ԼՂՀ Մարտակերտի** վարչական շրջանի դպրոցականների այցելությունները **Լոռի,** որտեղ բնության գրկում գտնվող **«Ծիծեռնակ» և «Գուգարք»** ճամբարներում նրանք հանգստանում են, կազդուրվում, բարեկամանում տեղի երեխաների հետ, էքսկուրսիաների շնորհիվ հաղորդակից դառնում մայր հայրենիքի պատմաճարտարապետական արժեքներին, այցելում թանգարաններ, պատմական վայրեր: Մշտապես աջակցություն է ցուցաբերվում մարզում գործող Վանաձորի Ուկրաինական համայնքի՝ **«Վերբիչենկա»** երգչախմբին, ովքեր մշտապես մասնակցում են կազմակերպվող մարզային միջոցառումների,Ուկրաինայի անկախության օրվան նվիրված միջոցառումներին, հարկ եղած ժամանակ հյուրախաղային ծրագրերին:

2. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Մշակույթի ոլորտում առկա հիմնախնդիրները

ՀՀ Լոռու մարզում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում մշակութային հաստատությունների շենք-շինությունների, գյուղական համայնքներում մշակույթի տների և ակումբների, գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների, նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի, արհեստի առանձին ճյուղերի պահպանման և զարգացման, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների զարգացման հետ: Ոլորտում առկա է նաև մասնագետ կադրերի վերապատրաստման խնդիրը:

Մշակույթի առանձին ենթաոլորտներում առկա հիմնական խնդիրներն են.

2.2 Պատմության և մշակույթի հուշարձաններ

Մարզի Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն ապահովելու համար կարևորվում են.

Վերանորոգման և վերականգնման ենթակա հուշարձանների հետ միասին վերանորոգել և վերականգնել նաև հուշարձաններ և տեսարժան վայրեր տանող ճանապարհները:

Մեծ ուշադրություն դարձնել Պատմության և մշակույթի հուշարձաններ ունեցող այն տարածքներին, որոնք կարող են վտանգվել հանքավայրերի շահագործման պատճառով:

2.3 Թանգարաններ

Մարզի թանգարանների գործունեության բարելավումն ու մշակութային արժեքների անվնաս պահպանությունն ապահովելու համար կարևոր են թանգարանային ոլորտում առկա հիմնախնդիրներից առաջնային համարվող հետևյալ խնդիրների լուծումը առաջիկա տարիների ընթացքում.

1. Շենքի վերանորոգման կարիք ունի Ստեփանավանի Ս.Շահումյանի տուն-թանգարանը, Գյուլագարակի «Լոռվա Կենցաղի» թանգարանը զուրկ է տարրական պայման-ներից:

2. Թանգարանների զարգացման ռազմավարության մշակման գործընթացում կարևոր է թանգարանային հավաքածուների համալրումը, հաշվառումը, պահպանությունը և մշակու-թային ժառանգության անխաթար փոխանցումը սերունդներին: Մարզային և հանրապետա-կան նշանակություն ունեցող «Լոռի-Փամբակ» երկրագիտական թանգարանին 2011թ. հոկտեմբերին հատկացվել է վերանորոգված քարաշեն շենք, որը կարիք ունի ներքին կահավորանքի:

3. Հիմնանորոգման կարիք ունի Վանաձորի Կ.Աբովյանի անվան պատկերասրահը:

2.4 Գրադարաններ

Գրադարանային ֆոնդի պահպանման նպատակով՝

Մարզի համայնքներում գործող գրադարանների շենքային պայմանների բարելավում /վերակառուցում, վերանորոգում/,

Մարզի համայնքներում չգործող գրադարանների համար հաստիքների նախտեսում,

Գրադարանային ֆոնդի նորացված գրականության համալրում,

Գրադարանների վերազինում ժամանակակից տեխնիկական սարքավորումներով:

2.5 Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ

Գեղարվեստական կրթության համակարգում հիմնական խնդիրները կապված են դպրոցների շենքերի վերանորոգման, ջեռուցման համակարգերի ներդրման, նոր գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերման և վերանորոգման, դահլիճների, նոր ուսումնա-մեթոդական գրականության ձեռքբերման հետ: Ոլորտի հիմնական խնդիրներն են՝

1. Շենքային պայմաններ,

2. Մասնագետների վերապատրաստման և վերաորակավորման կայուն համակարգի ստեղծում,

3. Գյուղական համայնքներում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սակավություն,

4. Ցածր աշխատավարձ,

5. Խիստ վերանորոգման կարիք ունի Օձունի արվեստի դպրոցը, մասնակի վերանորոգման՝ Տաշիրի երաժշտական դպրոցը, Վանաձորի Գ.Հախինյանի անվան երաժշտական դպրոցը. Ալավերդու արվեստի դպրոցը, Շիրակամուտ և Մեծավան համայնքների երաժշտական դպրոցները:

6. Գրեթե բոլոր դպրոցներում (24-ից՝ 15-ում) բացակայում են լոկալ ջեռուցման համակարգերը:

7. Ուսուցիչների ցածր աշխատավարձի հետևանքով մեծ է դպրոցներից որակյալ կադրերի արտահոսքը: Ելնելով սոցիալական իրավիճակից սահմանվում են ցածր ուսման վարձավճարներ, ինչը չի ապահովում դպրոցի պահպանման անհրաժեշտ ծախսերը, իսկ առանձին դեպքերում, սահմանված բարձր վարձավճարը բերում է սովորողների թվաքանակի նվազման:

8. Մշակույթի ոլորտի աշխատողներին տրամադրել է Սոցիալական փաթեթ:

9. Ի նպաստ ազգային մշակութային պետական քաղաքականության և հայապահպան-ման խնդրի, ինչպես նաև սակավաթիվ փողային գործիքների ուսուցման հետ կապված,

հնարավորության սահմաններում «Վանաձորի Կոմիտասի անվան արվեստի դպրոց ԿՈՒՀ» ՀՈԱԿ-ին հատկացնել պետպատվերով տեղեր:

2.6 Համերգային կազմակերպություններ

Այս ոլորտում առկա հիմնախնդիրները հիմնականում կապված են երաժշտարվեստի պահպանման, զարգացման և տարածման հետ: Առաջնային խնդիր է համերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողովրդական ստեղծագործությանը աջակցության ցուցաբերումը, հասարակության ստեղծագործական ներուժի օգտագործման, վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը և խթանումը, տարածքային (ՀՀ մարզերի հետ) մշակութային համագործակցությունը և մշակութային կյանքի զարգացումը:

2.7 Մշակութային միջոցառումներ.

Այս բնագավառում առկա հիմնախնդիրներն են.

1) մշակութային միջոցառումներին հատկացվող պետական միջոցների անբավարարությունը, դրանով պայմանավորված՝ պետական միջոցների հաշվին անցկացվող միջոցառումների ընդհանուր քանակի պակասը:

2) զանգվածային՝ հատկապես բացօթյա միջոցառումներ կազմակերպելու նպատակով համապատասխան տեխնիկական /ձայնալուսային/ սարքավորումներով հագեցվածության բացակայությունը:

3. 2019-2021 ԹԹ. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

3.1 Մշակույթի բնագավառում 2019-2021թթ. ընկած ժամանակահատվածում ակնկալվում է՝

- «Լոռի Փամբակի» երկրագիտական թանգարանում մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացումը: Ներկայումս մուտքագրվել է 8082 ցուցանմուշ: Պակասը պայմանավորված է կայքի հետ կապված տեխնիկական և ինտերնետ կապի խնդիրներով:
- Օձունի արվեստի դպրոցի շենքի հիմնանորոգում.
- Մեծավանի երաժշտական դպրոցի հիմնանորոգում.
- Շիրակամուտի երաժշտական դպրոցի հիմնանորոգում.
- Շնողի արվեստի դպրոցի մասնակի նորոգում:
- Վանաձորի Գ.Հախինյանի անվ. երաժշտ. դպրոցի մասնակի վերանորոգում

3.2 «ԼՈՌԻ-ՓԱՄԲԱԿ» ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՁԱՅՆԱԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՅՔԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Նկարագիր.

«Լոռի-Փամբակ» երկրագիտական թանգարանում ազդանշանային համակարգի տեղադրման նախընտրելիությունը բխում է թանգարանի անվտանգության խնդիրներից:

Ունենալով բարձրարժեք ու հարուստ գիտահիմնական և գիտաօժանդակ նյութերի ֆոնդ՝ թանգարանը չունի իր ֆոնդերն ու ցուցադրվող հավաքածուները անվտանգ պահպանելու հնարավորություն:

Հարկ է նշել նաև, որ ազդանշանային համակարգի տեղադրմամբ ակնկալվում է թանգարան այցելությունների թվի աճ՝ պայմանավորված նրանով, որ ավելի անվտանգ, ապահով ցուցասրահներ ունենալով հնարավոր է դառնում ցուցադրության դնել ավելի բարձր արժեք ներկայացնող հավաքածուներ:

Հավելված 3.2.1

Սարքավորումներ	**Անվանում**	**Քանակ /հատ/**	**Արժեք /հազար դրամ/**	**Ընդամենը /հազար դրամ/**
	Օդափոխման սարք	5	70,0	350,0
	Ջերմաչափ	11	0,5	5,5
	Խոնավաչափ	11	5,0	55,0
	Կրակմարիչ	20	60,0	1200,0
	Համակարգիչ	3	270,0	810,0
	Հեռախոս	1	25,0	25,0
	Հեռուստացույց	1	250,0	250,0
	DVD	1	25,0	25,0
	Պրոյեկտոր	1	300,0	300,0
	Ազդանշանային համակարգ (ողջ շենքի համար)	2 1	200,0 100,0	500,0
	Մուտքը նկարահանող համակարգ	1	150,0	150,0
Ֆոնդային գույք	Գլաններ գորգեր և կարպետներ փաթաթելու համար	15	50,0	750,0
	Ստելաժներ 4 հարկանի, 3 մետրանոց	16	50,0	800,0
Աշխատասենյակների գույք	Սեղաններ	12	50,0	600,0
	Աթոռներ	40	15,0	600,0
	Չհրկիզվող պահարան	4	40,0	160,0
	Պահարան փաստաթղթերի	6	70,0	420,0
Ցուցադրության անհրաժեշտ գույք	Ոտիկ մետաղե եռոտանի	20 հատ	(1 x 10.000)	200000
	Տումբաներ՝ փոքր միջին մեծ	 15 20 20	 10,0 15,0 20,0	 150,0 300,0 400,0
	Պատվանդան մեծ հնագիտական նմուշների ցուցադրության համար	1	80,0	80,0
	Պատվանդանը փակող ապակիներ		90,0	90,0
	Ցուցադրության ուղղանկյուն տումբա ապակիներով փակվող	3	50,0	150,0
	Ցուցադրության եռանկյուն տումբա ապակիներով փակվող	3	50,0	150,0
	Ցուցափեղկեր ապակով փակվող	5 հատ	50,0	250,0
	Ցուցապահարան ապակե 4 հարկանի	2 հատ	80,0	160,0

	Պարաններով իրար միացող մետաղե ձողեր	20 հատ	5,0	100000
				9030,5

Ծանոթություն՝ յուրաքանչյուր իրի արժեքը նշված է մոտավոր:

ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի հիմնական ֆոնդերի հավաքածուների տեղեկույթը թվայնացնելու գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական սարքաշարերի ու կապի միջոցների ձեռքբերման, ինչպես նաև այլ ծախսերի /թարգմանություններ և լուսանկարում և այլն/

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ին հաստատված Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծման կարգի անհրաժեշտ տեխնիկական սարքաշարի, թարգմանությունների և լուսանկարման ֆինանսական ցանկը.

Անվանում	Պարամետրեր	քանակ հատ	միավորի գինը /հազար դրամ/	արժեք /հազար դրամ
Համակարգիչ	Main Board - Asus: H81M-K (1150)(intel H 81), Micro ATX, DDR III - Processor - Intel: Core i3-4130 (1150), 2x3400MHCooler - Intel: intel(1155), Memory - RAM: 4GB (DDR III)- Hard Disk - Seadate: 1000GB (SATA3), 64/7200-Optic Disk - Samsung- Case - Mercury: 1ZZ, Micro ATX, Midi-Tower Monitor- Samsung: S22C300, 21.5, 1920x1080, 5mc Keyboard - Genius: KB-110, USB Mouse - Jetion: JT-046, USB Speaker- Genius: SP-U 110, (2-.0), 1Bt, USB	1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1	300,0	300,0
Համակարգիչ	Main Board - Asus: H81M-K (1150)(intel H 81), Micro ATX, DDR III - Processor - Intel: Core i3-4130 (1150), 2x3400MHCooler - Intel: intel(1155), Memory - RAM: 4GB (DDR III)- Hard Disk - Seadate: 1000GB (SATA3), 64/7200-Optic Disk - Samsung- Case - Mercury: 1ZZ, Micro ATX, Midi-Tower Monitor- Samsung: S22C300, 21.5, 1920x1080, 5mc Keyboard - Genius: KB-110, USB Mouse - Jetion: JT-046, USB Speaker-Genius: SP-U 110,(2-.0),1Bt, USB	1 1 1 1 1 1 1 1 1 1 1 1	300,0	300,0
Տպիչ սարք	HP Officejet 7500A wide	1	139,0	139,0
Լուսանկարչական ապարատ	Canon SX 510 HS	1	180,0	180,0

էլեկտրոնային կրիչ	32 GB	3	12,9	38,7
Պրոյեկտոր	MW621 ST	1	350,0	350,0
Պրոյեկտորի էկրան	Digis DSKC-1101 (Kontur-C, формат 1:1, 89", 160*160, MW)	1	60,0	60,0
Թարգմանություն ռուսերեն		760 էջ	2,0	1520,0
անգլերեն		760 էջ	3,0	2.280,0
Նմուշների լուսա-նկարում (6220 նմուշ-ազգագրություն, հնագիտություն)		6220	250	1555,0
Ընդամենը՝				**6722,7**

Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանը ունի 33528 ֆոնդային նմուշ, որից՝ 4365 հնագիտություն, 1854 ազգագրություն, նոր-նորագույն պատմություն 2730:

4. 2019-2021թթ «ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐ

2018թ. անցկացվելիք միջոցառումների նկարագիր–նախահաշիվ

Հաստատված

Տարե-թիվ	h/h	Միջոցառման անվանումը	Ամիսը	Գումարը /հազար դրամ/	Ֆիննասավոր-ման աղբյուրը
2018թ.	1.	Ղարաքիլիսայի հերոսամարտի 100-րդ տարելիցին նվիրված հանդիսություն	մայիս	504.4	ՀՀ պետ բյուջե
	2.	«Վարդավառ»	հուլիս	600,0	ՀՀ պետ. բյուջե
	3.	Ազգային նվագարանների, ժողովրդական երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային մրցույթ-փառատոն	հոկտեմբեր-նոյեմբեր	1.105,0	ՀՀ պետ. բյուջե
	4.	Պատանի երաժիշտ կատարողների և ստեղծագործողների փառատոն	մայիս-հունիս	400,0	ՀՀ պետ. բյուջե
	5.	Լոռի-Արցախ մշակույթի օր	հունվար-դեկտեմբեր	700,0	ՀՀ պետ. բյուջե
		Ընդամենը՝		3309.4	

2019-2021թթ. նախատեսվող անցկացվելիք միջոցառումների նկարագիր–նախահաշիվները

Նախագիծ

Տարե-թիվ	h/h	Միջոցառման անվանումը	Ամիսը	Գումարը /հազար դրամ/	Ֆիննասավոր-ման աղբյուրը
2019թ.	1.	Պատանի երաժիշտ կատարողների և ստեղծագործողների փառատոն	տարվա ընթացքում	400,0	ՀՀ պետ. բյուջե

	2.	Ազգային նվագարանների, ժողովրդական երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային մրցույթ-փառատոն	հոկտեմբեր-նոյեմբեր	1105,0	ՀՀ պետ. բյուջե
	3.	Լոռվա հարսանիք / ոսկե և ադամանդե հարսանյաց հանդիսության կազմակերպում/	տարվա ընթացքում	257,3	ՀՀ պետ. բյուջե
	4.	«Վարդավառ»	հուլիս-օգոստոս	647.1	ՀՀ պետ. բյուջե
	5.	«Լոռի-Արցախ» մշակույթի օր	տարվա ընթացքում	900,0	ՀՀ պետ. բյուջե
		Ընդամենը՝		**3.309.4**	

Տարե-թիվ	h/h	Միջոցառման անվանումը	Ամիսը	Գումարը /հազար դրամ/	Ֆիննասավոր-ման աղբյուրը
2020թ.	1.	Պատանի երաժիշտ կատարողների և ստեղծագործողների փառատոն	տարվա ընթացքում	400,0	ՀՀ պետ. բյուջե
	2.	Ազգային նվագարանների, ժողովրդական երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային մրցույթ-փառատոն	հոկտեմբեր-նոյեմբեր	1.105,0	ՀՀ պետ. բյուջե
	3.	Լոռվա հարսանիք / ոսկե և ադամանդե հարսանյաց հանդիսության կազմակերպում/	տարվա ընթացքում	257,3	ՀՀ պետ. բյուջե
	4.	«Վարդավառ»	հուլիս-օգոստոս	647,1	ՀՀ պետ. բյուջե
	5.	Լոռի-Արցախ մշակույթի օր	տարվա ընթացքում	900,0	ՀՀ պետ. բյուջե
		Ընդամենը՝		**3.309,4**	

Տարե-թիվ	h/h	Միջոցառման անվանումը	Ամիսը	Գումարը /հազար դրամ/	Ֆիննասավոր-ման աղբյուրը
2021թ..	1.	Պատանի երաժիշտ կատարողների և ստեղծագործողների փառատոն	տարվա ընթացքում	400,0	ՀՀ պետ. բյուջե
	2.	Ազգային նվագարանների, ժողովրդական երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային մրցույթ-փառատոն	հոկտեմբեր-նոյեմբեր	1.105,0	ՀՀ պետ. բյուջե
	3.	Լոռվա հարսանիք / ոսկե և ադամանդե հարսանյաց հանդիսության կազմակերպում/	տարվա ընթացքում	257,3	ՀՀ պետ. բյուջե
	4.	«Վարդավառ»	հուլիս-օգոստոս	647,1	ՀՀ պետ. բյուջե
	5.	Լոռի-Արցախ մշակույթի օր	տարվա ընթացքում	900,0	ՀՀ պետ. բյուջե
		Ընդամենը՝		**3.309,4**	

«ՊԱՏԱՆԻ ԵՐԱԺԻՇՏ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՓԱՌԱՏՈՆ»

Անցկացման վայրը՝ Վանաձոր / Ստեփանավան, Ալավերդի կամ Սպիտակ/
Ժամկետ՝ Տարվա ընթացքում

Փառատոնը կանցկացվի Վանաձոր կամ մարզի այլ քաղաքային համայնքներում, որտեղ իրենց մասնակցությունը կունենան մարզի երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի դպրոցներից երաժիշտ կատարողներ և ստեղծագործողներ:
Փառատոնը կնպաստի երեխաների կատարողական վարպետության բարձրացմանը, գաղափարական գիտակցության զարգացմանը, բարոյական աշխարհայացքի ձևավորմանը, ճաշակի բարձրացմանը, ազգային և համամարդկային մշակութային արժեքների տիրապետմանը՝ ժամանակակից քաղաքացու կայացմանը:

Նկարագիր - նախահաշիվը

հ/հ	**Ծախսերի անվանումը**	**Քանակը**	**Չափման միավորը (հազար դր)**	**Գումարը (հազար դր)**
1.	Փոխադրամիջոց /մասնակիցների տեղափոխման/	8-10 մեքենա	20,0	180,0
2.	Պատվոգրերի	40-50 հատ	500	25,0
3.	Տեխնիկական սպասարկում	1անգամ	30,0	40,0
4.	Մասնակիցներին օրապահիկ	100 հոգու	1,500	150,0
5.	այլ ծախսեր			5.0
	Ընդամենը՝			**400.0**

ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ-ՊԱՐԻ ԵՎ ԱՍՄՈՒՆՔԻ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ

Ն կ ա ր ա գ ի ր

Անցկացման վայրը՝ ք. Վանաձոր
Անցկացման ժամկետը՝ հոկտեմբեր-նոյեմբեր /2 օր/

Հայկական ազգային նվագարանները ըստ արժանվույն պրոպագանդելու, հայ ժողովրդական արվեստի ավանդույթների պահպանման և տարածման, ինչպես նաև ժամանակին համահունչ քայլելու նպատակով ՀՀ Լոռու մարզում կազմակերպվում է ամենամյա ժողովրդական նվագարանների, երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային փառատոն, որին մասնակցում են մարզի երաժշտական և արվեստի դպրոցների սաները, մասնագիտացված և սիրողական համույթներ, անհատ կատարողներ՝ երեք տարիքային խմբերով:

Փառատոնի անցկացման համար ստեղծվում է կազմկոմիտե և մրցութային հանձնաժողով, որում ներգրավված են մարզի մշակույթի բնագավառի լավագույն մասնագետներ:

Փառատոնին ողջույնի ելույթներով մասնակցում են նաև նախորդ տարիների հաղթողները, ինչպես նաև արդեն կայացած կոլեկտիվներ և անհատ կատարողներ: Փառատոնի մասնակիցները պարգևատրվում են դիպլոմներով, պատվոգրերով և հուշանվերներով:

Նկարագիր – նախահաշիվը

h/h	Միջոցառման անվանումը	Չափման միավորը	Քանակը	Չափման միավորը (հազար դր)	Գումարը (հազար դր)
1.	Տրանսպորտային միջոցներ				
	Մասնակիցների տեղափոխում	մարդ			
	Ալավերդի-Վանաձոր-Ալավերդի		30	2,0	60.0
	Շնող – Վանաձոր – Շնող		30	2,0	60.0
	Օձուն – Վանաձոր - Օձուն		30	2,0	60.0
	Ստեփանավան-Վանաձոր-Ստեփանավան		30	1.5	45,5
	Սպիտակ-Վանաձոր-Սպիտակ		30	1.5	45,5
	Տաշիր-Վանաձոր-Տաշիր		30	2.0	60,0
2.	Տեխնիկական միջոցներ				
	Դահլիճների վարձակալում	օր	2	40.0	80.0
	Ռադիոսարքավորումների վարձակալում	ծառայութ.	2	30.0	60.0
3.	• Ազդագրեր	հատ	20	2.0	40.0
	• Փառատոնի խորհրդանիշ	հատ	1	40.0	40.0
	• Տեսաֆիլմի նկարահանում	ծառայութ.	1	80.0	80.0
	• Լուսանկարահանում	ծառայ/հատ	100	0.5	50.0
	• Գովազդ/հեռուստատեսային և ռադիո/	ծառայութ .	--	65.0	65.0
4.	Մրցանակներ				
	ա) դափնեկիր /փողային-լարային-հարված./	հատ	4	30.0	120.0
	բ) առաջին կարգ	հատ	4	20.0	80.0
	գ) երկրորդ կարգ	հատ	4	10.0	40.0
	դ) երրորդ կարգ	հատ	4	5.0	2.0
	ե) Խրախուսական մրցանակներ	հատ	30	2.0	60.0
5.	• Հաղորդավարական ծառայություն	մարդ	2	20.0	40.0
	Ընդամենը՝				**1105.0**

«ԼՈՌՎԱ ՀԱՐՍԱՆԻՔ»
/ոսկե և ադամանդե հարսանյաց հանդիսության կազմակերպում/
Նկարագիր

Անցկացման վայրը՝ ՀՀ Լոռու մարզ
Անցկացման ժամկետը՝ տարվա ընթացքում

Ամուսնությունը մարդկային կյանքի ծագումի չափ հին է: Այն գոյություն է ունեցել և իրականացվում է տարբեր ձևերով ու ըմբռնումներով՝ սկսած վաղ ժամանակներից:

Դարերի ընթացքում եկեղեցական ժողովների հաստատած կանոններով պետական օրենքների հաստատումով այն եկել հասել է մինչ մեր օրերը:

Ամուսնությունը որպես բնական դաշինք կնքվում է այր և կնոջ միջև, տևական ժամանակով և Աստծո անունով եկեղեցում օրհնվում է ընտանեկան միությունը:

Ավետարանական պատգամը մեզ հուշում է՝ «Աստծո միացրածը թող, որ մարդ թող չզատե»:

Նկարագիր - նախահաշիվը

h/h	Հանդիսության ծախսեր	Գումարը /հազար դրամ/
1.	Դրամական պարգև հոբելյարներին	120,0
2.	Հանդիսության տեսաֆիլմի նկարահանման	100,0
3.	Տրանսպորտային ծախսեր	30,0
4.	Չնախատեսված այլ ծախսեր	7,3
	Ընդամենը՝	**257,3**

«ՎԱՐԴԱՎԱՌ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
Նկարագիր

Անցկացման ժամկետը՝ հուլիս - օգոստոս
Վայրը՝ Գյուլագարակ «Հեքիաթ» հանգստի գոտի

Վարդավառն արիական տոներից է և կապված է սիրո ու գեղեցկության դիցուհի Աստղիկի հետ: Այն շարժական է և սովորաբար տոնվում է Զատիկից 98 օր հետո: «Վարդավառ» նշանակում է ջրով օծված:

Վարդավառը հայերի սիրելի տոներից է: Այդ օրը մեծ թե փոքր խանդավառությամբ իրար օծում են ջրով, միմյանց Սեր ու Գեղեցկություն են տալիս, երգում, պարում, նորոգում աստվածային խորհուրդը, փառաբանում Աստղիկին, իրար նվիրում նորոգ սիրո խորհրդանիշ ծաղիկը՝ Վարդը: Միջոցառումը պետք է սկսել «Վարդավառին» նվիրված նախաբանով, դրան միացնել նաև Առաքելական եկեղեցու տոնացույցում տեղ գտած Քրիստոսի պայծառակերպության տոնի թատերականացված մասը:

Սկզբում պետք է լինի «Վարդավառի» ծիսական արարողությունը՝ համապատասխան երգերով, պարերով, թատերականացված կտորներով, դրան պետք է հաջորդեն «Խնդումի» և «Նուրիի» ծեսերը, Նուրի տիկինի այցելությունը, ժողովրդին բերք ու բարիք բաժանելու արարողությունը:

Միջոցառումը պետք է ավարտվի ջրոցիով և ուրախ համերգային ծրագրով, որին մասնակից են դառնում հրավիրված և հավաքված մարդիկ:

Նկարագիր - նախահաշիվը

Ծախսերի անվանումը	Չափման միավ.	միավորի գինը /հազար դրամ/	Գումարը /հազար դրամ/
Միջոցառման տեխնիկական սպասարկում	ծառայություն՝1	40,0	40,0
Արտիստների Վճարման	14 մարդ	10,0	140,0
Հաղորդավարական սպասարկման	2 մարդ	10,0	20.000
Մատաղօրհնություն	200 մարդ	1,0	200,0
Շահումյան-Գյուլագարակ-Շահումյան	30 մարդ	1,0	30,0
Վանաձոր – Գյուլագարակ- Վանաձոր /պարային խմբեր,անհատ կատարողներ/	2 ավտոբուս	20,0	40,0
Ալավերդի-Գյուլագարակ – Ալավերդի /պարային խմբեր,անհատ կատարողներ/	1 ավտոբուս	30,0	30.0
Ստեփանավան-Գյուլագարակ-Ստեփանվ.			

/պարային խմբեր,անհատ կատարողներ/	2 ավտոբուս	10,0	20,0
Սպիտակ-Գյուլագարակ-Սպիտակ /պարային խմբեր,անհատ կատարողներ/	1 ավտոբուս	20,0	20,0
Տաշիր-Գյուլագարակ-Տաշիր /պարային խմբեր,անհատ կատարողներ/	1 ավտոբուս	30,0	30,0
Մեծավան-Գյուլագարակ-Մեծավան /պարային խմբեր,անհատ կատարողներ/	1 ավտոբուս	30,0	30,0
Վանաձոր – Գյուլագարակ- Վանաձոր /Լրատվական միջոցների /	1 Գազել		20,0
Վանաձոր – Գյուլագարակ- Վանաձոր / սովորական մասնակցների /	1 ավտոբուս	20,0	20,0
Չնախատեսված ծախսեր			7,1
Ընդամենը ՝			**647,1**

«ԼՈՌԻ – ԱՐՑԱԽ /Մարտակերտ/» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Նկարագիրը

Անցկացման վայրը՝ ԼՂՀ, ք.Մարտակերտ
Ժամկետ՝ տարվա ընթացքում

Ելնելով մշակույթի համաչափ զարգացման մասին ՀՀ կառավարության հիմնական գերակայություններից՝ կարևորվում է Լոռու մշակույթի ներկայացումը արցախահայությանը, ինչպես նաև հյուսիսային Հայաստանի և Արցախի ազգագրական, ծիսական առանձնահատկություններին երկկողմանի ծանոթությունը: Միջոցառման անցկացման նպատակով արդեն ՀՀ Լոռու մարզից ԼՂՀ Մարտակերտ են մեկնում մարզի մշակութային լավագույն համույթներ, անհատ կատարողներ, նկարիչներ, գրողներ, դերասաններ՝ ընդհանուր թվով շուրջ 35 մասնակից: Հանդիպում-համերգները տեղի են ունենում Մարտակերտի մշակույթի պալատում: Միջոցառմանը ներկա են գտնվում շուրջ 350-450 հանդիսատես:

Նկարագիր - նախահաշիվը

հ/հ	**Ծախսերի անվանումը**	**Չափման միավ.**	**Միավորի գինը /հազար դրամ/**	**Գումարը /հազար դրամ/**
1.	Փոխադրամիջոց /Վանաձոր-Մարտակերտ - Վանաձոր/	2 ավտոբուս	125,0	250,0
2.	Արտիստների վճարման և սննդի	30 մարդ	15,0	450,0
3.	Տեսաժապավենի նկարահանման	1 օրինակ	50,0	50,0
4.	Հուշանվերների	2-3 հատ	75,0-50,0	150.000
	Ընդամենը՝			**900,0**

5. ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզի մշակույթի տներում և գեղարվեստի դպրոցներում գործում են ընդհանուր դիզայնի, գոբելենի, նկարչության, ասեղնագործության, փափուկ խաղալիքների, սեղանների ձեւավորման խմբակներ, որոնցում ընդգրկված են 294 սովորողներ:

Ստեղծվում են նպաստավոր պայմաններ ժողովրդական վարպետների գործունեության համար, խթանվում է ոլորտի տարբեր ճյուղերի զարգացմանը, այդ թվում՝ արհեստանոցների տրամադրում, պուրակներում արձանների տեղադրում, սիմպոզիումների կազմակերպում և այլն:

Աջակցություն է ցուցաբերվում արհեստագործական կենտրոնների, արհեստանոցների ստեղծմանը, ընդլայնվում ժողովրդական վարպետների գործունեության շրջանակը:

Հատուկ ուշադրության կենտրոնում են գտնվում տարածաշրջանի զինվորական մասերը, մանկատունը, տարեցների տունը, երկրապահի ծնողազուրկ երեխաները, սոցիալապես անապահով խավը, հաշմանդամները, վետերանները, ծերերը, որոնց համար կազմակերպվում են բարեգործական միջոցառումներ, համերգներ, ներկայացումներ, այցելություններ:

Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում, որը վերակառուցված և վերանորոգված է ունի անհրաժեշտ գույք և սարքավորումներ և ջեռուցվում է կաթսայատնով: Դալիճը ունի 493 նստատեղ: Տարեկան նոր ներկայացումների թիվը 1-2 է, համերգների թիվը՝ 48, հանդիսատեսի միջին թիվը՝ 15-ից - 16.000, համերգների և ներկայացումների թիվը այլ համայնքներում՝ 24: *Վանաձորի* ***Կամերային երգչախումբը*** տարեկան նախապատրաստում է 2-4 նոր ծրագիր: Ամսական միջին թվով անց է կացվում 1-3 միջոցառում՝ 350-400 հանդիսատեսով: Երգչախմբի համար ձեռք է բերվել բեմական հագուստի 80 հավաքածու:

Վանաձորի ***Կամերային նվագախումբը*** տարեկան նախապատրաստում է 1-2 նոր ծրագիր, ամսական 1-2 համերգ՝ 200-250 հանդիսատեսով: Նվագախմբի համար ձեռք է բերվել բեմական հագուստի 14 հավաքածու:

Մարզի երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում ըստ աշխատանքային պլանի, անց են կացվում բաց և վարպետության դասեր, կատարվում են քննարկումներ, արվում դիտողություններ և առաջարկություններ: Դպրոցների համար ձեռք է բերվել մոտ 540 կտոր մասնագիտական գրականություն:

Մշակութային ծրագրերի իրականացման, բնակչության տարբեր շերտերի հետ կապի ամրապնդման և պահպանման նպատակով մարզպետարանը համագործակցում է ՀԿ-ների հետ («Օրրան», «Հայկական կարիտաս», «Խաչվող ուղիներ», «Գայաննա», «Առաքելություն Հայաստանի», «Զանգակ», «Փոքրիկ Իշխան», «YMCA», «Լոռու արվեստների զարգացման կենտրոն»):

Նախատեսվում է Վանաձորում հիմնել ժամանակակից արվեստի կենտրոն, որտեղ իրենց աշխատանքային գործունեությունը կշարունակեն ծավալել Վանաձորի Կամերային երգչախումբը, Կամերային նվագախումբը և «Բոհեմ» կամերային թատրոնը:

6. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2019-2021թթ. ՀՀ Լոռու մարզպետարանի մշակույթի ոլորտի առաջնային ռազմավարական նպատակներն են՝

Մշակույթի համակարգի գործունեության և կառավարման արդյունավետության զարգացումը, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը, ոլորտի աշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված բարեփոխումների շարունակումը, մասնագիտական կրթության բնագավառում համապատասխան բարձր որակի ապահովումը:

Ոլորտը կարգավորելու, պետական միջոցները առավել նպատակային օգտագործելու համար բարելավման կարիք ունի օրենսդրական դաշտը, ինչը հնարավորություն կտա իրականացնելու կառավարության քաղաքականության գերակայությունները:

7. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ 2019-2021 թթ. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

7.1 Մշակույթի ոլորտի 2019-2021 թթ. միջնաժամկետ ծրագիրը միտված է ապահովելու մշակույթի տարբեր բնագավառներում ըստ ենթաբնագավառների նպատակների իրականացումը, որոնք կապված են մշակութային հաստատությունների շենք-շինությունների, գյուղական համայնքներում մշակույթի տների և ակումբների, գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների, նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի, արհեստի առանձին ճյուղերի պահպանման և զարգացման, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների զարգացման հետ:

7.2 Պատմության և մշակույթի հուշարձաններ

Մարզի Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն ապահովելու համար կարևորվում են.

Վերանորոգման և վերականգնման ենթակա հուշարձանների հետ միասին վերա-նորոգել և վերականգնել նաև հուշարձաններ և տեսարժան վայրեր տանող ճանապարհները:

Մեծ ուշադրություն դարձնել Պատմության և մշակույթի հուշարձաններ ունեցող այն տարածքներին, որոնք կարող են վտանգվել հանքավայրերի շահագործման պատճառով,

7.3 Թանգարաններ.

Մարզի թանգարանների գործունեության բարելավումն ու մշակութային արժեքների անվնաս պահպանությունն ապահովելու համար կարևոր են թանգարանային ոլորտում առկա հիմնախնդիրներից առաջնային համարվող հետևյալ խնդիրների լուծումը առաջիկա տարիների ընթացքում.

1. Շենքի վերանորոգման կարիք ունի Ստեփանավանի Ս.Շահումյանի տուն-թանգարանը, Գյուլագարակի «Լոռվա Կենցաղի» թանգարանը զուրկ է տարրական պայման-ներից:

2. Թանգարանների զարգացման ռազմավարության մշակման գործընթացում կարևոր է թանգարանային հավաքածուների համալրումը, հաշվառումը, պահպանությունը և մշակութային ժառանգության անխաթար փոխանցումը սերունդներին: Մարզային և հանրապետական նշանակություն ունեցող «Լոռի-Փամբակ» երկրագիտական թանգարանին 2011թ. հոկտեմբերին հատկացվել է վերանորոգված քարաշեն շենք, որը կարիք ունի ներքին կահավորանքի:

3. Հիմնանորոգման կարիք ունի Վանաձորի Կ.Աբովյանի անվան պատկերասրահը:

7.4. Գրադարաններ

Գրադարանային ֆոնդի պահպանման նպատակով՝

Մարզի գյուղական համայնքներում գործող գրադարանների շենքային պայմանների բարելավում /վերակառուցում, վերանորոգում/,

Մարզի համայնքներում չգործող գրադարանների համար հաստիքների նախատեսում,

Գրադարանային ֆոնդի նորացված գրականության համալրում,

Գրադարանների վերազինում ժամանակակից տեխնիկական սարքավորումներով:

7.5 Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ

2019-2021 թթ. առաջնահերթ նպատակներ սահմանել.

1. Շենքային պայմանների բարելավում /շենքերի վերանորոգման, ջեռուցման համակարգերի ներդրում և այլն/

Օձունի արվեստի դպրոցի վերանորոգում.

Վանաձորի Գ.Հախինյանի անվան երաժշտական դպրոցի, Ալավերդու արվեստի դպրոցի, Տաշիրի երաժշտական դպրոցի և Շիրակամուտ համայնքի երաժշտական դպրոցի մասնակի վերանորոգում:

2. Շենքային պայմանները բարելավված դպրոցների նոր գույքի ձեռքբերում.

3. Մասնագետների վերապատրաստում և վերարակավորում.

4. Մշակույթի ոլորտի աշխատողներին տրամադրել Սոցիալական փաթեթ:

7.6 Համերգային կազմակերպություններ

2019-2021 թթ. արվեստի ոլորտի առաջնահերթ նպատակներն են.

- ստեղծագործական գործունեության աջակցումն ու խթանումը,
- համերգահյուրախաղային փառատոնների գործունեության սուբսիդավորումը:

7.7 Մշակութային միջոցառումներ.

2019-2021թթ. մշակութային միջոցառումների իրականացման համար առաջնահերթ նպատակներն են.

1) մշակութային միջոցառումներին հատկացվող պետական միջոցների անբավարարությունը, դրանով պայմանավորված՝ պետական միջոցների հաշվին անցկացվող միջոցառումների ընդհանուր քանակի պակասը:

2) զանգվածային՝ հատկապես բացօթյա միջոցառումներ կազմակերպելու նպատակով համապատասխան տեխնիկական /ձայնալուսային/ սարքավորումներով հագեցվածության բացակայությունը:

7.8 Ոչ նյութական մշակութային ժառանգության

Ոչ նյութական մշակութային ժառանգության հանրային սեփականություն դարձնելուն ուղղորդել՝

ա/ Հայ մշակութային ժառանգության հանրահռչակումը:

բ/ Երիտասարդ ստեղծագործողների և կատարողների խրախուսումը:

գ/ Մարզում առկա ստեղծագործական ներուժի բացահայտումը, մշակույթի, ժողովրդական արվեստի ստեղծագործությունների հանրահռչակումը

դ/ Միջհամայնքային մշակութային միջոցառումների, մրցույթների կազմակերպումը:

ե/ Տաղանդավոր երիտասարդների հայտնաբերումն ու խրախուսումը:

զ/ Միջմարզային մշակութային համագործակցության ապահովումը:

է/ Ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքի աշխուժացումը:

ը/ Ազգային ծեսերի և ավանդույթների պահպանումը, տարածումն ու զարգացումը:

թ/ Հաշմանդամ ինքնուս ստեղծագործողների, անհատ կատարողների համերգային ծրագրերի կազմակերպումը:

8. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գեղարվեստական կրթության համակարգում հիմնական խնդիրները կապված են դպրոցների շենքերի վերանորոգման, ջեռուցման համակարգերի ներդրման, նոր գույքի ձեռքբերման, դահլիճների վերանորոգման, նոր ուսումնամեթոդական գրականության ձեռքբերման հետ:

Ոլորտի հիմնական խնդիրներն են՝

1. Շենքային պայմանների բարելավում, հիմնանորոգում, կառուցում
2. ՈՒսումնական օրինակելի պլանների մշակում և հատկացում
3. Մասնագետների վերապատրաստման և վերաորակավորման կայուն համակարգի ստեղծում
4. Գյուղական համայնքների երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների շենքերի հիմնանորոգում և կառուցում
5. Դպրոցի դասատուների աշխատավարձերի բարձրացում
6. Սոցիալական փաթեթների տրամադրումը:

9. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԳՐԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

- Լոռու մարզի թանգարանների, Վանաձորի «Հորովել» երգի-պարի անսամբլի, կամերային երգչախմբի, կամերային նվագախմբի, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների աշխատողների աշխատավարձի բարձրացում՝ 2019թ.՝ 40%, 2020թ.՝ 30%, 2021թ.20%:

10. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2019-2021թթ. մշակույթի ոլորտի համար նախատեսված հատկացումների ավելացումը կուղվի թանգարանների, համերգային կոլեկտիվների /երգչախմբի, նվագախմբի/ գործունեության խթանմանը և մշակութային միջոցառումների իրականացմանը:

Մշակույթի ոլորտում պետական բյուջեից ստացված հատկացումների հետ մեկտեղ ծախսերի իրականացմանն են ուղվում նաև ՊՈԱԿ-ների սեփական եկամուտները:

Սեփական եկամուտները գոյանում են հիմնականում վճարովի ծառայությունների մատուցումից, տոմսերի վաճառքից:

Վճարովի ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներն ուղղվում են աշխատավարձի լրավճարներին, ապրանքների ձեռք բերմանը, կոմունալ ծառայությունների ծախսերի իրականացմանը:

ՀՀ Լոռու մարզում 2016թ. ընթացքում իրականացված միջոցառումների մասին

h/h	Ազգային պետական տոներ	Հիշատակի օրեր	Հոբելյանական ծննդյան տարեթվեր	Ավանդական տոներ	Այլ միջոցառումներ	Ծանոթություն
1.	**9.** **Այդ թվում** 1.Ամանորի և Սբ. ծննդյան	**6.** **Այդ թվում՝** 1.Ցեղասպանության 2.Մեռելոցի օր	**22** 1.Հ.Թումանյան 147 2.Կոմիտաս 147 3.Ա.Իսահակյան	**9** **Այդ թվում՝** 1.Ծաղկի տոն 2.Թարգմանչաց տոն	**85.** / Համերգ-հանդիսություններ, Գրական-երաժշտական	**Ընդհանուր 130**

	2. Բանակի օր 3.Կանանց տոն 4.Աշխատանքի օր 5.Հաղթ. և խաղաղության օր 6.Հանրապետ. օր 7.Սահմանադր. օր 8.Անկախ. օր 9.Երկ.օր	3.Բռնադատվածների 4.Երկրաշարժի 5.Անհայտ կորած ազատամարտիկների 6.Ադրբեջանում կազմակերպված ջարդերի	141 4.Հ.Շիրազի 102 5.Պ Սևակ 92 6. Ս.Զորյան 127 7.Ա.Սպենդիարյան 145 և այլ... 8.Ա.բաբաջանյանի95 9.Մոցարտի 260	3.Ընտանիքի օր 4.Խաչվերաց տոն 5.«Խորոված»ի տոն 6.Տիկնիկային թատրոնների 11-րդ միջզ.փառատոն 7.Ավանդական «Բերքի տոն2016» 8.«Պանրի տոն» 9.«Համբարձման» տոն	ցերեկույթներ, Մրցույթ-փառատոներ պարի-երգի-ասմունքի,ժող. նվագարանների, Ցուցահանդես-վաճառք, Գրքի շնորհանդեսներ, թատերականացված հանդիսություններ և այլ	

ՀՀ Լոռու մարզում 2017թ. ընթացքում իրականացված միջոցառումների մասին

h/h	Ազգային պետական տոներ	Հիշատակի օրեր	Հոբելյանական ծննդյան տարեթվեր	Ավանդական տոներ	Այլ միջոցառումներ	Ծանոթություն
1.	**9.** **Այդ թվում** 1.Ամանորի և Սբ. ծննդյան 2. Բանակի օր 3.Կանանց տոն 4.Աշխատանքի օր 5.Հաղթ. և խաղաղության օր 6.Հանրապետ. օր 7.Սահմանադր. օր 8.Անկախության օր 9.Երկրապահի օր	**6.** **Այդ թվում՝** 1.Ցեղասպանության 2.Մեռելոցի օր 3.Բռնադատվածների 4.Երկրաշարժի 5.Անհայտ կորած ազատամարտիկների 6.Ադրբեջանում կազմակերպված ջարդեր 7. «Սուրբ Խաչի» տոն	**22** 1.Հ.Թումանյան 148 2.Կոմիտաս 148 3.Ա.Իսահակյան 142 4.Հ.Շիրազի 103 5.Պ Սևակ 93 6. Ս.Զորյան 128 7. Հ. Մաթևոսյան 82 8.Ա.բաբաջանյանի96 9. Ա. Փելեշյան 79 10. Հ. Սարուխան 70 11. Չարենց 120 և այլ...	**9** **Այդ թվում՝** 1.Ծաղկի տոն 2.Թարգմանչաց տոն 3. «Վարդատոն» 4.Խաչվերաց տոն 5.«Խորոված»ի տոն 6.Տիկնիկային թատրոնների 11-րդ միջզ.փառատոն 7.Ավանդական «Բերքի տոն2016» 8.«Պանրի տոն» 9.«Համբարձման»տոն	**85.** / Համերգ-հանդիսություններ, Գրական-երաժշտական ցերեկույթներ, Մրցույթ-փառատոներ պարի-երգի-ասմունքի,ժող. նվագարանների, Ցուցահանդես-վաճառք, Գրքի շնորհանդեսներ, թատերականացված հանդիսություններ և այլ	**Ընդհանուր 136**